Պատուաւոր քաղաքացոց մի մասը ևս շարշիներից է կազմված, որոնք զանազան չնչին առարկաները ման են ածում գիւղերը և խեղճ գիւղացոց խաբում շեշի կտորների, ասեղների, ուլունքների հետ փոխելով փութերով ցորեան, գարի, իւղ, պանիր, ձու և այլն և այլն։

Գիւղացու հարստահարողների երկրորդ տեղն են բռնում վանքերը։

Պատմական ժամանակից մնացած ամեն մի վանքը իւր թեմն ունի, չ'կայ ոչ մի հայ գիւղ, որ մի վանքի չը պատկանի։ Դոցանից մեծ մասը հայոց ազնուականներու թողած կրօնական ջերմեռանդութեան յիշատակն են, որոնք իրանց սեպհականութիւնքը նուիրել են զանազան վանքերին։ Ամեն մի թեմ պարտաւորուած է իւր աթոռը (վանքը) պահելու, այսինքն կերակրելու նորա միաբանութեան, վճարելով պտղին, որ բաղկացած է ցորենից, գարուց և ընդեղէններից,

---

ըստահարութեանց եւ աւելի շատ աղքատ են։ Օրինակ Վանայ շրջապատի թեմար անունով գաւառը եւ Ռշտունեաց գաւառի հիւսիսային մասը Վասպուրականի բոլոր գաւառներումը ամենախիստ կերպով հարստահարված, ամենից սաստիկ վտանգված աղքատներն են. դրանցից է կազմված Վանեցի մշակների մեծամասնութիւնը։